ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«03» հունիսի 2016 թվականի N: 172-Ա ք.Գյումրի

ՈՒԺԵՂ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ԴԵՊՔՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 28-Ի N: 236-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի դրույթներով, ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հունիսի 10-ի «ՈՒԺԵՂ երկրաշարժի դեպքում Հայաստանի Հանրապետության բնակչության պաշտպանության կազմակերպման պլանը հաստատելու մասին» N 919-Ն որոշման 3-րդ կետի պահանջների՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հաստատել՝

1) ՈՒԺԵՂ երկրաշարժի դեպքում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի գործողությունների պլանը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) ՈՒԺԵՂ երկրաշարժի հետևանքով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի հիդրոտեխնիկական կառույցների պատվարների հնարավոր փլուզման դեպքում հնարավոր իրավիճակի աղյուսակը՝ համաձայն N 2 հավելվածի.

3) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի տարածքի քիմիական վտանգավոր օբյեկտներում վթարի դեպքում հնարավոր իրավիճակի աղյուսակը՝ համաձայն N 3 հավելվածի.

4) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի բնակչության պաշտպանության միջոցառումների կառավարման սխեման՝ համաձայն N 4 հավելվածի.

5) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի ղեկավար կազմի ազդարարման սխեման՝ համաձայն N 5 հավելվածի..

6) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի տարածքի հետախուզության կառավարման սխեման՝ համաձայն N 6 հավելվածի.

7) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի փրկարարական և վթարավերականգնողական ուժերի և միջոցների հաշվարկը՝ համաձայն N 7 հավելվածի.

8) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզում երկրաշարժի հետևանքների վերացման պլան ժամանակացույցը՝ համաձայն N 8 հավելվածի.

9) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզում առկա ինժեներական տեխնիկայի հաշվարկը համաձայն N 9 հավելվածի.

10) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի բժշկական ապահովման ուժերի և միջոցների հաշվարկը՝ համաձայն N 10 հավելվածի.

11 Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզում առկա տրանսպորտային միջոցների հաշվարկը՝ համաձայն N 11 հավելվածի.

12) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի տրանսպորտային միջոցներով ապահովված կազմակերպությունների ցանկը՝ համաձայն N12 հավելվածի.

13) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի տուժած բնակչության՝ հագուստով և առաջին անհրաժեշտության ապրանքներով ապահովման հաշվարկը՝ համաձայն N 13 հավելվածի.

14) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի տուժած բնակչության և փրկարարական կազմավորումների սննդով ապահովման հաշվարկը՝ համաձայն N 14 հավելվածի.

15) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզից Սյունիքի մարզին տրամադրվող ուժերի և միջոցների վերաբերյալ հաշվարկը՝ համաձայն N15 հավելվածի.

16) ՈՒժեղ երկրաշարժի դեպքում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի բնակավայրերում երկրաշարժի ուժգնության աղյուսակը ըստ MSK-64 սանդղակի՝ համաձայն N 16 հավելվածի:

17) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի բնակչության թվի և շենք–շինությունների վերաբերյալ տեղեկություններ՝ համաձայն N 17 հավելվածի:

2. ՈՒժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2012 թվականի օգոստոսի 28-ի «Ուժեղ երկրաշարժի դեպքում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի գործողությունների պլանը հաստատելու մասին» N 236-Ա որոշումը:

Հ. ՍԻՄՈՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է